

«ՎԵՐԱԾՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԻ ՀԻՄՈՒՆՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին

«Վերածնվող Հայաստան» կուսակցության վարչությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Վերածնվող Հայաստան» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) կից ներկայացված հատուկ նպատակի հիմունքի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունը (այսուհետ՝ տարեկան ֆինանսական հաշվետվություն), որոնք ներառում են 2025 թվականի տարեկան ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի ու գույքի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությանը կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, տարեկան ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով պատրաստված են «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022թ. հուլիսի 22-ի N 04-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) ֆինանսական հաշվետվողականությանը վերաբերող պահանջներին համապատասխան:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (այսուհետ՝ ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը տարեկան ֆինանսական հաշվետվության աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կուսակցությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի (այսուհետ՝ ՀՄԷՍԻ) կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրի և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԻ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում/ ֆինանսական հաշվետվողականության հիմունքը

Մենք ուշադրություն ենք հրավիրում տարեկան ֆինանսական հաշվետվությանը կից «Հատուկ նպատակի հիմունքը» ծանոթագրությանը, որտեղ նկարագրվում է ֆինանսական

հաշվետվողականության հիմունքը: Տարեկան ֆինանսական հաշվետվությունը պատրաստված են Օրենքի և Որոշման ֆինանսական հաշվետվողականությանը վերաբերող պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, տարեկան ֆինանսական հաշվետվությունը չի կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը, սույն հանգամանքով պայմանավորված, չի ձևափոխվել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը տարեկան ֆինանսական հաշվետվության համար

Կուսակցության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվողականությանը վերաբերող դրույթների համաձայն տարեկան ֆինանսական հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ տարեկան ֆինանսական հաշվետվության պատրաստումն ապահովելու համար:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Կուսակցության տարեկան ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը տարեկան ֆինանսական հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ տարեկան ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ է էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չէրաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միջկհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, եթե խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն տարեկան ֆինանսական հաշվետվությունն օգտագործողների՝ այդ տարեկան ֆինանսական հաշվետվության հիման վրա կայացվող որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում են մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Երբ

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի պատճառով տարեկան ֆինանսական հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքե նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն

